Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

<<ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ԹԻՎ 2 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀՈԱԿ

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ 2024

ՀՀ Լոռու մարզ Ստեփանավանի թիվ 2 մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի աշխատանքային գործունեությունը սկսեց 2024թ օգոսի 12-ից: Նախադպրոցական հաստատությունը՝ թիվ 2 մանկապարտեզ ՀՈԱԿ-ը իր մեջ ներառում է 3 վարչական բնակավայրերի մասնաճյուղեր՝ Արմանիսի վարչական բնակավայր, Ուրասար վարչական բնակավայր և Կաթնաղբյուր վարչական բնակավայր:

Ուրասարի մասնաճյուղը իր գործունեությունը սկսեց օգոստոսի 12-ից: Ընտրվեցին մանկավարժական և վարչական աշխատակիցներ ըստ հաստիկացուցակի:

Մանկապարտեզի ղեկավարումն իրականացվում է համայնքապետարանի տրամադրած կանոնադրությամբ և ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

Սահմանված կարգով աշխատակիցների միջև բաշխված են պաշտոնական պարտականությունները:

Ապահովվում է ծախսային միջոցների նպատակային օգտագործումը, առկա են հաստատության տարեկան գույքագրման և նյութական արժեքների տվյալները:

Հաստատության գործունեության սկզբին սաների թիվը՝ 12 էր, դեկտեմբերի 1-դրությամբ սաների թիվը 18 է՝ 9 տղա, 9 աղջիկ:

Առկա են պայմանագրեր՝ ծնողների, աշխատակիցների հետ:

Առկա է նաև հաստատության ԱՌԿ պլանը:

Մանկապարտեզում կազմակերպվել է ուսումնավարժանք Ստեփանավանի ՀՓՁ-ի հետ համագործակցելով: Ուսումնավարժանքի թեման էր <<Հրդեհի դեպքում անձնակազմի և երեխաների տարահանում>>: Այն բարձր գնահատվեց ՀՓՁ-ի կողմից, վարժանքին մասնակցություն էին ունեցել 16 սան, 5 աշխատակից:

Ստեղծված են պայմաններ սննդի կազմակերպման համար, մշտական վերահսկողություն է տարվում հիգենիկ վիճակի վերաբերյալ:

Թիվ 2 մանկապարտեզը ընդգրկվել է փորձարկվող մանկապարտեզների ցանկում, մասնակցություն ենք ունեցել վերապատրաստմանը և տնօրենի կողմից գրվել է հետազոտական աշխատանք, վերապատրաստվել է նաև դաստիարակը՝ Սեդա Իգիթյանը, պարապմունքները կազմակերպվում է նոր չափորոշիչային պահանջներին համապատասխան: Կիրառվում են կրթադաստիարակչական գործընթացի կազմակերպման արդիական ձևեր:

Ստեփանավանի թիվ 2 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի երեք մասնաճյուղերում կգործի 1ական տարատարիք խումբ՝20,20և 25 երեխաների թվաքանակով:

Ուրասարի մասնաճյուղում կազմակերպվում են համատեղ միջոցառումներ մաանկավարժների, սաների և ծնողների մասնակցությամբ: Պարբերաբար հանդիպումներ են կազմակերպվում ծնողների կետ ՝ ժողովի տեսքով, սեմինար քնարկման ձևաչափով և անհատական հանդիպումներով:

Մանկապարտեզին կից կա այգի որտեղ երեխաները կարողանում են ակտիվ լինել և նկատել եղանակային փոփոխությունները, կատարում են դիտումներ:

Առկա են զարգացմանը համապատասխան ուսումնական հիմնական նյութեր և գրականություն:

Մանկապարտեզը գտնվում է համայնքապետարանի ենթակայության տակ և այդ պատճառով միշտ գտնվում է համայնքապետարանի ուշադրության կենտրոնում:

Համայնքապետի կողմից մանկապարտեզի բակում կատարվել են ասֆալտապատման աշխատանքներ:

Հետագայում նախատեսվում է նաև ցանկապատել տարածքը:

Համյանքապետի ուշադրության կենտրոնում են թե՛ աշխատակիցները, թե՛ սաները:Համայնաքապետի կողմից ամանորյա անականկալներ ստացան և՛ սաները և՛ աշխատակիցները, որի համար շնորհակալություն ենք հայտնում պարոն Ա. Գրիգորյանին:

Մանկապարտեզը ակտիվ մասնակցություն է ունենում տարբեր միջոցառումների, նշել ենք <<Բերքի տոն>> և աշնան միջոցառում:

Հաճախակի այցեր ենք ունենում դպրոց ավագ ենթախմբի հետ, որպեսզի մանկապարտեզ- դպրոց անցումը սահուն լինի:

Երեխաները հաճախակի են լինում բնության գրկում, նկատում են բնության փոփոխությունները:

Նշել ենք նաև ամանորը <<Ձմեռային հեքիաթ >> խորագրով և պարոն Գրիգորյանի կողմից ստացանք նվերներ:

Երեխաները անակնկալ նվերներ ստացան նաև <<Սագամար>> ՓԲԸ կողմից:

Երեխաների մոտ նկատվում է դրական դինամիկա կրթության և զարգացման ուղղությամբ:

Շնորհակալություն ենք հայտնում համայնքապետարանին և պարոն Ա. Գրիգորյանին մշտապես մեզ աջակցելու համար: